



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**


Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material







ՊՍԵՏՈՆԱԳԻՐ, ԿԱՆՈՆԱԳԻՐ

ԵՒ

ՅԱՅՏԱԳԻՐ

ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹԵԱՆ

ԱԶԳԱՅԻՆ ԿԵԳՐՈՆԱԿՍՆ ՎԱՐԺԱՐՍՆԻՆ

ՂԱԼԱԹԻՈՅ



Կ. ՊՕԼԻՍ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Մ. Կ. ՍԱՐԳԵԱՆ

—  
1886



ՀԱՅԿԱՆ ԿՈՆՍՏԱՆ  
ՀԱՅԿԱՆ ԿՈՆՍՏԱՆ

ՊԱՇՏՕՆԱԳԻՐ, ԿԱՆՈՆԱԳԻՐ

ԵՒ

ՅԱՅՏԱԳԻՐ

ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹԵԱՆ

ՍԶԳԱՅԻՆ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐԺԱՐԱՆԻՆ

ՂԱԼԱԹԻՈՅ

7468P 1/4



Կ. ՊՕԼԻՍ

ՏԳԱԳՐՈՒԹԻՒՆ Մ. Կ. ՍԱՐԸԵԱՆ

1886



ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԱՊՐԱՆՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ

# ՊԱՇՏՈՆԱԳԻՐ

Տ. Տ. ՅԱՐՈՒԹԻՒՆ ՎԵՀԱՊԵՏԵԱՆ  
ՍՐԲԱԶԱՆ ԱՐԲԵՊԻՍԿՈՊՈՍԻ

Ե Ի

ՊԱՏՐԻԱՐԻԻ Կ. ՊՕԼՍՈՅ



Պատրիարքարան Հայոց  
Թիւ. 50

Կ. Պոլիս 10 Դեկտ. 1885

Ազնուաշուք Ատենապետ էֆէնարի  
Խնամակալութեան Աղղային Կեղրոնական  
վարժարանի Ղալաթիոյ



Ինչպէս գիտէք, Աղղ. Կեղր. վարժարանի  
բայման խնդրոյն համար ասկէ առաջ Յանձնաժո-  
ղով մը կազմուած էր, որ պաշտօն ունէր նոյն վար-  
ժարանին մատակարարութեան համար Ղալաթիոյ  
կալուածոց սնտուկին վճարելի դումարին քանակու-  
թիւնը ճշդել, ուսմանց յայտագիրն և անոր դոր-  
ժադրութեան եղանակն սահմանել և ծրագիր մը  
ներկայացնել: Սոյն Յանձնաժողովն իւր պաշտօնը  
կատարած և ծրագրով մը մատուցած լինելով Կեղր.  
վարժարանի ուսմանց և մատակարարութեան յայ-  
տագիրն, որ կը դժէր և վարժարանին խնամակա-  
լութիւնն ստանձնող մարմնոյն պարտաւորութիւն



ներքին, Ազգ. Վարչութեան Խառն Ժողովն իւր Նոյ. 20 ի նստին մէջ ուշադրութեան առաւ նոյն ծրագիրն և ըստ առաջարկութեան Յանձնաժողովոյ՝ կեդր. վարժարանի Հոգաբարձութեան անունն «Խնամակալութիւն» անուն վերածելէ յետոյ՝ ինչ ինչ բարեփոխութիւններով ընդունեց ծրագիրն և պատրաստեց հարկ եղած կանոնագիրն :

Հետեւապէս ըստ որոշման Խառն Ժողովոյ՝ ընդգրոյս հաղորդելով Պատ. Խնամակալութեանդ նոյն կանոնագիրը, աւելորդ չեմք համարիր յայտնել նպեւ որ,

**Ա.** Յանձնարարուած է Ղալաթիոյ կալուածոց Հոգաբարձութեան բանակցիլ ընդ փոյթ Պատուարժան Խնամակալութեանդ և Ներսէս-Վարժապետեան Ընկերութեան հետ, և ստանալով այս վերջինէն Ղալաթիոյ կալուածոց սնտուկին պարտուց բարձման համար պէտք եղած գումարն՝ իւր հաշիւներն մինչեւ ներկայ տարւոյս Գեկա. 31 դըլուխ կապել և յառաջիկայ Յունվ. 1 էն սկսեալ կալուածոց մատակարարութեանն յանձնել խնամակալութեանդ :

**Բ.** Հրահանգ տրուած է Ղալաթիոյ Ս. Լուսաւորիչ Եկեղեցւոյ Թաղ. Յանձնաժողովին որ վարժարանին շէնքին հարկ եղած մասերն Խնամակալութեանդ տրամադրութեան ներքեւ դնէ, փոխադրելով թաղային նախակրթարանն ուրիշ յարմար շէնքի մը մէջ. —

**Գ.** Գրուած է Ներսէս-Վարժապետեան Ընկերութեան որ ըստ նախորդ որոշմանց՝ փութով հատուցանել տայ Ղալաթիոյ կալուածոց մնացորդ պարտքը ներկայ ամսոյս մէջ, որպէս զի յառաջիկայ Յունվ. 1ին հաշուական խնդիրներ մնացած չը լինին, և այլ եւս վարժարանին բացման յետաձգման պահանջներն վերցած լինին. —

Եւ որպէս զի թէ՛ կալուածոց սնտուկին պարտուց վճարման և թէ՛ կեդր. վարժարանի բացման գործողութիւնք կատարուին փութանակի, Խառն Ժողովն իւր կողմէ լիազօր պատուիրակ կարգած է նաեւ Քաղաքականին Ատենապետ Վսեմ. Նուրեան էֆէնային, որպէս զի ի դիմաց Ազգ. Վարչութեան ընծայէ այն ամէն աջակցութիւններն, որոց հարկը կը տեսնուի սոյն կարեւոր գործը ի գլուխ հանելու համար :

Հաւաստի եմք որ Պատուարժան Խնամակալութիւնդ քաջալերեալ այն լիուրի վստահութենէն՝ զոր Ազգ. կեդր. Վարչութիւնն ցոյց տուած է իրեն. նոյն իսկ Ղալաթիոյ կալուածոց մատակարարութեան պաշտօնն ալ վերագրելով Խնամակալութեանդ, և ոգեւորեալ այն բարոյական մեծ արգիւնքներէն՝ զորս Ազգն պիտի քաջէ կեդր. վարժարանին հաստատութեամբ, իրեն յանձնուած կարեւոր պաշտօններն պիտի վարէ արգիւնաւորապէս և ըստ կանոնագրի, և իւր կողմէ եւս յարմարութեան մտնելով թէ՛ Ղալաթիոյ կալուածոց Հոգաբարձութեան և թէ՛ Ներսէս-Վարժապետեան



ընկերութեան հետ՝ ձեռնարկէ ի գործ և բանակ-  
ցի միանգամայն որոյ հետ որ անկէ վարժարանին  
հանդիսաւոր բացման գործողութեանց համար :—

Մաղթելով Ձեզ ի Տեառնէ կար և զօրութիւն  
կը նուիրեմք մեր հայրական սիրոյ ողջոյնն և օրհ-  
նութիւնն :

Մնամք աղօթարար :

Պ. Կ.

ՅԱՐՈՒԹԻՒՆ ԱՐԲԵՊԻՍԿՈՊՈՍ



# ԿԱՆՈՆԱԳԻՐ

## ԱԶԳԱՅԻՆ ԿԵԴՐ. ՎԱՐԺԱՐԱՆԻ

ՂՍ.ՂԱ.Թ.ԻՈՅ

ԸՆԿԱԼԵՍԱԷԻ ՎՍԻԵՐԱՑԵՍԱԷԻ

Ի ԽՍ.Թ.Ը ԺՈՂՈՎՈՅ ԱԶԳ. ԿԵԴՐ. ՊԵՏԿ. ՎԱՐՁՈՒԹԵԱՆ

# ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ

## ՄՍ.ՏԱ.ԿԱՐԱՐՈՒԹԻՒՆ ՎԱՐԺԱՐԱՆԻ

Յօդուած 1 — Աղգային կեդրոնական վարչութեան  
Խառն ժողովոյ որոշմամբ Ղալաթիոյ կեդրոնական վար-  
ժարանի մատակարարութիւնը յանձնուած է տասն պատ-  
ուարժան անձերէ բաղկացեալ խնամակալութեան մը ,  
որոյ անդամք կարգուած են հետեւեալը ,

Արիկ	Էֆէնտի	Ունճեան
Անտօն	»	Հաճեան
Կարապետ	»	Սվաճեան
Մկրտիչ	»	Էսաեան
Մինաս	»	Չերազ
Յարութիւն	»	Նորատունկեան
Յովհաննէս	»	Թորոսեան
Յովսէփ	»	Եուսուֆեան
Սերոփբէ	»	Կիւլպէնկեան
Յիզրան	»	Բարաղամեան



Յօդ. 2 — Խնամակալութեան պաշտօնաւարութիւնը հինգ տարուան համար սահմանեալ է , սկսեալ 1886 տարուոյ Յունւարի 1էն :

Յօդ. 3 — Խնամակալութեան սլաշտօնն է՝

Ա. Բանալ Ղալաթիոյ կեդրոնական վարժարանը սոյն կանոնագրով արամադրեալ կրթական յայտագրին համաձայն , եւ պահել զայն պարտ ու պատշաճ վիճակի մէջ :

Բ. Մատակարարել Ղալաթիոյ կալուածներն , եւ յայտկացնել կալուածոց եւ վազֆի հասոյթները կեդրոնական վարժարանի ծախուց , եւ վարել վազֆի դործողութիւններն Ազգային օճակականութեանց համար արդէն ընկալեալ , եւ յ'ապագային վարչութեան կողմէ հաստատուելիք օրինաց համաձայն :

Գ. Վճարել կալուածոց նորոգութեանց եւ ապահովագրութեանց ծախսերը , կալուածական եւ այլ օրինական տուրքերն , ինչպէս նաեւ Ղալաթիոյ համար Ազգային վարչութեան կողմանէ որոշուած ֆանչէլէրի տըրոց կէսը , միւս կէսին վճարուիլը թաղին Եկեղեցւոյ սնտուկին պատկանելով :

Յօդ. 4 — կեդրոնական վարժարանի խնամակալութիւնն արտօնեալ է դրահական կարողութեան տէր աշակերտաց համար պատշաճ քանակութեամբ թոշակ մը սահմանել . իսկ ձրիաբար պիտի ընդունուին 'ի վարժարան աղքատ ուսանողք՝ վկայեալք Ազգ. Պատրիարքարանէ :

Յօդ. 5 — Կալուածական հասոյթներէ եւ կեդրոնական վարժարանի ուսանողաց թոշակներէ , ինչպէս նաեւ նուիրատուութեանէ եւ կտակներէ գոյանալիք գումարներէն

զատ , խնամակալութիւնն արտօնեալ է նաեւ արտասովոր հասոյթներ հայթայթելու , ինչպէս են՝ հանգանակութիւն , վիճակահանութիւն եւ այլն , եւ այս մասին Ազգային Պատրիարքարանի հաւանութիւնն առնելով՝ պիտի վայելէ նորա բարոյական աջակցութիւնը :

Յօդ. 6 — Արգելեալ է խնամակալութեան կալուածները գրաւի դնել , թէ եւ սլայմաններն շահաւէտ իսկ լինին :

Յօդ. 7 — Վազֆի մահլիւլներէ արտադրեալ գումարք պիտի յատկանան Ազգային կեդրոնական վարչութեան հաւանութեամբ ծախու առնուելի նոր կալուածոց գընման , կամ նորոգ կառուցանելի կալուածական շինութեանց , եւ բոլոր տսոնց հասոյթներն եւս պիտի յատկանան կեդրոնական վարժարանի մատակարարութեան , բայց սակայն առաջին անգամ Ուսումնարանի բացման առթիւ պէտք եղած սկզբնական ծախուց համար , ինչպէս են՝ նորոգութիւնք վարժարանի , գնումն կարասեաց , գրեանց , ուսումնական գործիքներու , եւ այլն , խնամակալութիւնն արտօնուած է առ առաւելն հինգ հարիւր ոսկւոյ գումար մ'առ այս յատկացնել արդի գոյացեալ մահլիւլի հասոյթէն :

Յօդ. 8 — Խնամակալութիւնը պիտի վայելէ թաղային պաշտօնէութեանց ըստ Սահմանագրութեան ունեցած իրաւասութիւններն եւ սլարտականութիւններն , եւ ըստ այնմ պատասխանատու է Ազգային վարչութեան թէ կալուածոց եւ վազֆի մատակարարութեան , եւ թէ վարժարանին անտեսական եւ ուսումնական մասին որոց հաշիւներն ու համարատուութիւնը կանոնաւորապէս ամեն տարեգլուխ պիտի ներկայացնէ Ազգային կեդրոնական վարչութեան 'ի քննութիւն եւ 'ի վաւերացումն :




Յօդ. 9 — Եթէ խնամակալութեան անդամներէն հրաժարմամբ եւ կամ մահուամբ պակտողներ լինին՝ մնացեալ անդամը մինչեւ երկու ամիս ընտրելեաց երկպառակ ցանկ մը պիտի ներկայացնեն Ազգային Վարչութեան ընտրութեան եւ Վաւերացման համար . եթէ անփոյթ գտնուին սոյն պարտականութիւնը մինչեւ երկու ամիս կատարելու, Վարչութիւնն՝ կանխաւ ազդարարութիւն մ'ընելէ յետոյ . ինքն կը կատարէ այդ ընտրութիւնն եւ կը յաղորդէ խնամակալութեան :

Յօդ. 10 — Խնամակալութիւնը ջանադիր պիտի լինի յառաջիկայ տարւոյն սկիզբները բանալ Կեդրոնական Վարժարանը :

Յօդ. 11 — Ըստ որում հոգելոյս Տէր Ներսէս Սրբազան Պատրիարքի նախաձեռնութեամբ սկսեալ հանգանակութեան արդեամբը պիտի վճարուի Ղալաթիոյ կալուածոց սնտուկի մնացորդ պարտքը՝ 'ի ձեռն Ներսէս-Վարժապետեան Ընկերութեան, Ազգային Կեդրոնական Վարչութիւնն որոշած է որ Վարժարանին մէջ պատշաճ դիրքով եւ եղանակաւ արձանագրուի այս ազգօգուտ նուիրատուութիւնն 'ի յիշատակ հոգելոյս Տէր Ներսէս Սրբազան Պատրիարքի՝ հանդերձ անուամբ նուիրատուաց :

Յօդ. 12 — Խնամակալութիւնը պարտական է իւր պաշտօնավարութեան շրջանն աւարտած պահուն յանձնել առ Կեդրոնական Վարչութիւնն զՎարժարանն իւր ամբողջ գաւթերով, ( ինչպէս են՝ կալուածագիրք , միւս գրեանք , ուսումնական գործիք , կահ կարասիք , պատրաստ զբրամ , հաշուական եւ արձանագրական եւ այլ պաշտօնական ամեն գրութիւնք ) եւ բնաւ ո՛ր եւ է պարտք չը թողուլ :

## ՍՍՍՆ ԵՐԿՐՈՐԸ



### ԿՐԹԱԿԱՆ ՅԱՅՏԱԳԻՐ

Յօդ. 13. — Կեդրոնական Վարժարանի ուսմանց ընթացքը հինգ տարւոյ տեւողութիւն պիտի ունենայ եւ երկու շէջաններու բաժնուած է : Առաջին շրջանի համար երեք, իսկ երկրորդ շրջանի համար երկու տարի սահմանեալ են :

Յօդ. 14. — Աշակերտ մը Կեդրոնական Վարժարանի Ա. շրջանին մէջ ընդունուելու համար պէտք է զխնայ .

Կրօնք . — Քրիստոնէական եւ Սրբազան պատմութիւն :

Հայերէն . — Քերականութիւն , գրաբառէ յ'աշխարհաբառ թարգմանութիւնք , սլարդ խմբագրութիւնք :

Օսմաներէն . — Ընթերցումն եւ ուղղագրութիւն :

Ֆրանսերէն . — Համառօտ քերականութիւն եւ թարգմանութիւն Ֆրանսերէնէ 'ի Հայ :

Պատմութիւն . — Ազգային եւ ծանօթութիւնք 'ի վերայ հին ազգաց :

Աշխարհագրութիւն . — Տարերք բնական եւ Քաղաքական աշխարհագրութեան :

Ռուսոյութիւն . — Թուրքանութիւն ամբողջ եւ ըսկըզուէնք երկրաչափութեան :

Գեղագրութիւն . — Հայերէն , Տաճկերէն , Գաղղիերէն :

Գծագրութիւն .



Յօդ. 15. — Կեդրոնական Վարժարանի առաջին եւ  
բաժնայ շրջանին մէջ պիտի աւանդուին :

Կրօնագիտութիւն .

Հայերէն . — Ընդարձակ Քերականութիւն , գրա-  
գիտութիւն աշխարհագրա եւ գրաբառ , վերձանութիւն  
հին եւ նոր հեղինակաց :

Օսմաներէն . — Արաբերէն եւ Պարսկերէն Քերակա-  
նութիւն , Օսմաներէն շարագրութիւնք , թարգմանու-  
թիւն Ֆրանսերէնէ յ'Օսմաներէն եւ փոխադարձ :

Ֆրանսերէն . — Քերականութիւն ամբողջ , թարգ-  
մանութիւն Հայերէնէ 'ի Ֆրանսերէն եւ փոխադարձ ,  
տարբեր մատենագրութեան , միջակ խմբագրութիւնք :

Պատմութիւն . — Ազգային եւ Օսմանեան պատու-  
թեան , համառօտ պատմութիւն հին եւ նոր ազգաց :

Աշխարհագրութիւն . — Քաղաքական եւ պատմա-  
կան եւ մասնաւորապէս Թուրքիոյ :

Ուսողութիւն . — Թուաշանութիւն տեսական եւ  
գործնական եւ վաճառականական , գրահաշիւ ց'վերջ  
Բ. աստիճանի , երկրաչափութիւն տարրական , երկրա-  
չափական խնդրոց գրահաշիւով լուծումը , եռանկիւննաչա-  
փութիւն , Անդաշափութիւն :

Բնական գիտութիւնք . — Բնագիտութիւն , Բնա-  
կան պատմութիւն եւ Տարրալուծութիւն արհեստական :

Իրաւագիտութիւն . — Տարերք իրաւագիտութեան  
եւ Օսմանեան Օրէնագրութեան :

Վաճառականութիւն . — Տումարակալութիւն , վա-  
ճառականական աշխարհագրութիւն եւ օրէնք .

Առողջաբանութիւն .

Սղագրութիւն .

Գծագրութիւն .

Յօդ. 16. — Կեդրոնական Վարժարանի Բ. երկամեայ  
շրջանին մէջ պիտի աւանդուին :

Կրօնագիտութիւն .

Հայերէն — Քննական Քերականութիւն , Մատենա-  
գըրական , լուծումն գլխաւոր հայ հեղինակաց , ստու-  
գաբանութիւն եւ բաղդատական բանասիրութիւն :

Օսմաներէն . — Դպրութիւն եւ խմբագրութիւնք :

Ֆրանսերէն . — Քննական ընթերցումն մատենա-  
գրաց եւ խմբագրութիւնք :

Պատմութիւն — Ընդհանուր Ազգաց , իմաստասիրու-  
թիւն պատմութեան :

Աշխարհագրութիւն . — Ընդհանուր Ազգազգրութիւն  
( վերջին ուղեւորութիւնք )

Ուսողութիւն — Գրահաշիւ :

Երկրաչափութիւն , վերլուծական  
երկրաչափութիւն , գործնական  
տեղագրութիւնք .

Եռանկիւննաչափութիւն , մակարդակ  
եւ գնտածեւ :

Մեքենագիտութիւն :

Տիեզերագրութիւն :

Բնական գիտութիւնք . — Բնապատմութիւն , ( բու-  
սաբանութիւն , երկրաբանութիւն , հանքաբանութիւն ) .  
Տարրալուծութիւն , ( անգործարանաւոր եւ գործարանա-  
ւոր ) . Բնագիտութիւն , հանդերձ ուսողութեան գործա-  
ծութեամբ :

Իմաստասիրութիւն . — Հոգեբանութիւն , տրամա-  
բանութիւն , բարոյագիտութիւն եւ պատմութիւն իմաս-  
տասիրութեան :

Քաղաքական տնտեսութիւն .



Իրաւագիտութիւն — Օսմանեան եւ Աղղային օրէ-  
նըստըութիւն եւ վարչական իրաւագիտութիւն :

Ելմտական գիտութիւն .

Մանկավարժութիւն .

Յօդ. 17 — (\*) Վարժարանին եռամեայ եւ երկամեայ  
կրկին շրջաններու իւրաքանչիւր տարւոյ կրօնադիտութեան  
ուսման բաժանումները կը սահմանէ կեդրոնական Վար-  
չութեան կրօնական ժողովն , ինչպէս նաեւ այս ուս-  
մանց դասատուները կընտրէ եւ կը հսկէ աւանդութեան  
եղանակին վրայ :

Յօդ. 18 — Կեդրոնական Վարժարանոյ մէջ բարձր գի-  
տութիւնը պիտի աւանդուին Եւրոպական յարմար դատ-  
ուած լեզուաւ մը :

Ընկալեալ եւ վաւերացեալ 'ի Խառն ժողովոյ Աղղա-  
յին կեդրոնական Վարչութեան 'ի նիստ 20 Նոյեմբերի  
1885 ամի :

( Պ. Կ. ՅԱՐՈՒԹԻՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ )

(\*) Այս յօդուած հետեւեալ կերպով բարեփոխուած  
է որոշմամբ եւ պաշտօնագրով կեդրոնական Պատկառելի  
Վարչութեան :

Յօդ. 17 — Վարժարանին եռամեայ եւ երկամեայ  
կրկին շրջաններու իւրաքանչիւր տարւոյ կրօնադիտու-  
թեան ուսման բաժանումներն այժմէն կեդրոնական Վար-  
չութեան կրօնական ժողովն սահմանելով պիտի յանձնէ  
խնամակալութեան առ առաւելն մինչեւ Փետրվար 1 :  
Այս ուսմանց դասատուաց ընտրութիւնն խնամակալու-  
թիւնն ինք կը կատարէ կրօնական ժողովոյ կողմանէ վը-  
կայեալ Եկեղեցականաց մէջէն :

# ՅԱՅՏԱԳԻՐ

## ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹԵԱՆ

ԱԶԳԱՅԻՆ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՇԱՐԱՆԻ

Ղ Ա Ղ Ա Ք Ի Ո Յ

## ՅԱՌԱՋԱԲԱՆ

Ազգային կեդրոնական Վարժարանի խնամակալու-  
թիւնն պատիւ ունի ծանուցանել հասարակութեան թէ  
վերջապէս ունի 'ի ձեռին այն ամէն միջոցներն՝ որք ան-  
հրաժեշտ էին Վարժարանին բացման համար :

1885 Դեկտեմբեր 25ի Ազգային Վարչութեան պաշ-  
տօնագրովն , որ հրատարակեցաւ լրագրաց մէջ , եւ որ  
ներկայ յայտագրոյս սկիզբը կը վետեղուի , ճշդուեցաւ մեր  
պաշտօնն , եւ վաւերացան ուսումնական ընթացից եւ  
դրամական մատակարարութեան ծրագրերն . այժմ կը  
մնայ միայն գործադրել , եւ քաղել այն արդիւնքներն՝ ու-  
րոց իրաւամբ կ'սպասուի բաւական ժամանակէ 'ի վեր :

Այսպիսի լուսաւորեալ դարու մը մէջ՝ տեսնելով որ  
ամէն ազգաց մէջ իրթական գործին մեծ մղում կը տրուի,  
չայ ազգին համար երկրորդական բարձրագոյն կրթու-  
թեան չգոյութիւնն օր քան զ'օր զգալի կը լինէր , եւ ա-  
հա այս պակասը լցնելու համար քանի տարիէ 'ի վեր հո-  
գելոյս Ներսէս Պատրիարքի նախաձեռնութեամբ յղացեալ  
գործոյն վերջապէս կը ձեռնարկուի : Ազգային կեդրոնա-  
կան Վարժարանը պիտի լինի այնպիսի հաստատութիւն  
մը , որ ոչ միայն համապատասխանէ Մայրաքաղաքիս մէջ  
հաստատեալ բազմաթիւ Վարժարանաց , այլ նաեւ իրեն



եղական դիրքովն , ուղղութեամբն եւ հայ ուսանողին համար բացառիկ առաւելութիւններով տայ այն արդիւնքներ , զորս անկարելի է յուսալ օտար կրթարանաց մէջ : Խնամակալութիւնս զայս կէտ նպատակի պիտի ունենայ միշտ իւր աջայ առջեւ , այն է լաւագոնին համեմուտ ջանալ , եւ Վարժարանն այնպիսի վիճակի մէջ դնել , որով կարելի լինի մրցիլ նմանօրինակ հաստատութեանց հետ :

Կեդրոնական Վարժարանին առ Հայ ազգն մատուցանելիք ծառայութիւններն աստ թուել թերեւս հարկաւոր լինէր գրութեան մը մէջ , որոյ նպատակն է հրաւիրել զՀայ ծնողս դիմել առ նորահաստատ ուսումնարանն : Սակայն խնամակալութեանս վախճանն է գործով արժանալ Ազգին վստահութեան , քաջ գիտնալով որ աշխատութեան արդար զնահատութիւնը չէ որ կը պակսի այն ազգին՝ որ զգացած է ուսման պէտքն , եւ դիտէ քաջալերել այն հաստատութիւններն , որք ապագայ սերունդներ պատրաստելու վսեմ նպատակն ունին :

Կեդրոնական Վարժարանը զրամական տեսակէտով մեծ ապահովութիւն կը ներշնչէ արդարեւ : Իւր ելմտացոյցին մէջ զլսուաւոր հասցիքը կը գոյանայ կալուածական եկամուտներէ , զորս աճեցնելու եւ օր քան զ'օր շահաւոր կերպիւ սնօրինելու մասին խնամակալութիւնս ջանք չպիտի դաճանայ երբէք : Կեդրոնական Վարժարանն ունի հաստատուն եկամուտներ , որոց հասցիքը նորա նիւթական վիճակը կ'ապահովեն եւ յարատեւութիւնը կ'երաշխաւորեն :

Յարատեւութիւնն ամէն գործի էական պայմանն է , եւ ուրախութեամբ կաւետեմք վերջապէս թէ մի քանի տարիներէ ի վեր արուած աշխատութեամբ եւ ներսէս-Վարժապետեան Ընկերութեան Գործադիր Յանձնաժողովոյ ջանիւք կատարուած հանգանակութեան շնորհիւ , Ղալաթիոյ կալուածոց հասցիքներն 1886 Յունվար 1էն ի վեր

աղատ են դրեթէ բոլորովին եւ Կեդրոնական վարժարանի յատկացեալ բաց աւտի , ինչպէս կանոնագրին մէջ կը տեսնուի , յատուկ դումար մը կայ այժմէն սահմանեալ վարժարանին նախնական ծախուց համար , հետեւաբար չէնքը սպարաստ , նախնական ծախքերն ապահովեալ , եւ սովորական ծախուց համար տարեկան կարեւոր դումար մը հայթայթելու կարող հաստատուն եկամուտք : Այս քանը կարծեմք բուտական է զրամական ապահովութեան վրայ դաւալար մը տալու :

Ոչ նուազ գնահատելի են այն բարոյսիկան առաւելութիւնք , զորս պիտի վայելէ Կեդրոնական վարժարանն : Ուսմանց ծրագիրը մանրամասնօրէն կը հրատարակուի ի ստորեւ , զայն ճշդիւ գործադրելու համար խնամակալութիւնս յուժեղօք է կազմել ընտիր ուսուցչական խումբ մը , սր անգամոց անուանք պատիւ կը բերեն հաստատութեանս եւ Ազգին : Հայ եւ օտար վարժարանաց մէջ դասախօսող ուսուցիչք , Հայ թէ օտարազգի , Կեդրոնական վարժարանին ուսուցչական մարմինը կը կազմեն մեծաւ մասամբ , իրենց հետ ունենալով նշանաւոր Հայ անձնաւորութիւններ , որք Կեդրոնական վարժարանի բարձր նպատակը նշմարելով՝ հաճութիւն տուին նորա բարդաւաճման օժանդակել : Խնամակալութիւնս այժմէն շնորհապարտ է այս ձեռնտուութեանց համար , որովք Կեդրոնական վարժարանն եղական դիրք մը կստանայ :

Բաղմաթիւ են այն Հայ ուսանողք , որք կառավարութեան ուսումնարաններն եւ այլ օտար վարժարաններ կը դիմեն : Շնորհիւ Օգոստոսիառ Կայսեր ուսումնասիրական զգացմանց , Մայրարտղաբիս մէջ բարձրագոյն վարժարանք կը բաղմանան եւ կը քաջալերուին շարունակ : Կեդրոնական վարժարանն ալ սոցա շարքին մէջ կուգայ իւր դերը կատարել , եւ միջոց ու դիւրութիւն տալ իրենց ուսումը շարունակելու այն ուսումնասէր երիտասարդու-



թեան, որ ատկայ ի զուր կը բաղխէ օտար վարժարանաց դռները : Նմանապէս թաղային վարժարանաց ներկայ ընթացքին համար մեծ օգուտներ պիտի ունենայ Կեդրոնական վարժարանն, որովհետեւ իրաւ է թէ՛ այս կամ այն թաղային մասնաւոր վարժարանք իրենց ծրագրոց զլուխը բարձր ուսումներ կը պարունակեն, բայց որչափ ծրագիր այնչափ և տարբեր ճիւղեր ու եղանակներ, որոց ամբողջակի գործադրութիւնն իսկ չէ կարող համապատասխանել ընդհանուր պիտոյից : Կեդրոնական վարժարանը, բառնալով զայդ բեռն յիշեալ վարժարանաց վրայէն, առիթ կընձեռէ նոցա աւելի խնամ տանիլ նախնական կրթութեան գործոյն, վստահ լինելով թէ իրենց ուսումնաւորքը զուրկ չեն մնար նաև բարձրագոյն կրթութենէ :

Գաւառացի երկտասարդութիւնն ալ ոչ նուազ աւագ բաժին մ'ունի Կեդրոնական վարժարանին մէջ, Միացեալ Ընկերութեան և այլ գաւառական վարժարանաց ուսումնաւորտ աշակերտք, որք կուղեն շարունակել զիրենց ուսում, պիտի գտնեն ի Պոլիս այն վարժարանն՝ ուր կրնան իրենց փախաքին հասնիլ նպաստաւոր պայմաններով :

Վերջապէս, Կեդրոնական վարժարանի Խնամակալութիւնս, իւր խնամոց յանձնուած հաստատութեան ծրագրին մի քանի մասերը սոյն յայտարարութեամբ Հայ ժողովրդեան ներկայելով, կը հրաւիրէ զձեռոց օգուտ քաղել նորահաստատ վարժարանին ընծայած առաւելութիւններէն :

Կրթական սպահովութիւնն ակներեւ է. բարոյական մասին ալ վերոյիշեալ բացատրութիւնք լիովին կընծայեն վաշտուն ընթացքի մ'ն. յարատեւութեան ամէն պայմաններ, որոց վրայ պէտք է աւելցնել Ազգային Վարչութեան բարձր պաշտպանութիւնն և ամէն առթիւ օգնութեան և ձեռնտուութեան բացարձակ խոստումն :

Արդարութեան պարտք մ'է խոստովանիլ, թէ Ազգային Վարչութեան և իւր բարձրաշնորհ Նախագահին՝ Ամենապատիւ Տ. Տ. Յարութիւն Սրբազան Պատրիարքի, առ Խնամակալութիւնս ցոյց տուած համակրութեան ու վստահութեան փորձերը ու աջակցութիւնը, բուսական վարձատրութիւն մ'են անոնց՝ որք աշխատեցան և պիտի աշխատին ի զլուխ հանել հոգեւոյս Պատրիարքին յղացած գործը :





# ԾՐԱԳԻՐ ՈՒՍՄԱՆՑ

Բ Ա Վ Ա Ն Ե Ս Ա Յ՝ Ե Ր Կ ՈՒ Ս Շ Ր Զ Ա Ն Ս

Ա. ՇՐԶԱՆ ԵՐԵՔ ՏԱՐԻ

Բ. ՇՐԶԱՆ ԵՐԿՈՒ ՏԱՐԻ



ԱՌԱՋԻՆ ՇՐԶԱՆ



## Ա. ՏԱՐԻ

Շաբաթական

Ժ. Կ. Բ.

2 Կրօնագիտութիւն . —

3 Հայ լեզու եւ գրականութիւն . — Քաղաքացիականութեան , թարգմանութիւն գրաբանէ յաշխարհաբառ , յաշխարհաբանէ ի գրաբառ , աշխարհաբառ շարագրութիւն , վերծանութիւն հեղինակաց .

2 Պատմութիւն . — Ազգային , Օսմանեան եւ ընդհանուր . հին ազգաց մասնաւորագէտ Յունաց , Հռովմայեցեաց եւ Հայոց պատմութիւն մինչեւ միջին դար :

2 Աշխարհագրութիւն . — Բնական եւ Քաղաքական , պատմական աշխարհագրութիւն հին աշխարհի :

3 Ուսողութիւն . — Թուարանութիւն տեսական եւ գործնական , սկզբնաւորութիւն գրահաշուի եւ երկրաչափութեան , ուսումն պատկերաց մակարդակի , ի բաց թողլով նոցա չափը :

2 Բնական գիտութիւնք . — Սկզբնաւորութիւն բնագիտութեան եւ բնալուծութեան :

3 Օսմաներէն լեզու . — Թուրքերէն քերականութիւն , ուղղագրութիւն , շարագրութիւն :  
3 Ֆրանսերէն լեզու . — Քաղաքացիական կանոններ , թարգմանութիւն Ֆրանսերէնէ ի Հայ եւ իօխադարձ :

4 Վաճառականութիւն . — Վաճառականական աշխարհագրութիւն , սկզբունք տոմարականութեան :

4 Սղագրութիւն . — Ըստ հաճոյցի .

## Բ. ՏԱՐԻ

2 Կրօնագիտութիւն . —

3 Հայ լեզու եւ գրագիտութիւն — Թարգմանութիւն իօխադարձ , շարունակութիւն շարագրութեանց , սկզբնաւորութիւն գրադիտութեան , վերծանութիւն հին եւ նոր հեղինակաց :

2 Պատմութիւն . — Միջին դարու եւ Հայոց պատմութեան , Բաղրատունիք եւ Ռուբինեանք :

2 Աշխարհագրութիւն . — Բնական , քաղաքական եւ պատմական , աշխարհագրութիւն նոր աշխարհի , մասնաւոր ուսումն Օսմ. պետութեան :



- 3 | Ուսողութիւն . — Վաճառականական թուա-
- բանութիւն , գրահաշիւ ց'վերջ Բ. աստիճա-
- նի , երկրաչափութիւն տարրական՝ ց'վերջ :
- 2 | Բնական գիտութիւն . — Քաղուած եւ շա-
- րունակութիւն նախորդ տարւոյ դասուց , դործ-
- նական մասին վրայ տեղեկութիւն :
- 4 | Իրաւագիտութիւն . — Ներածութիւն ի-
- րաւագիտութեան :
- 3 | Օսմաներէն լեզու . — Սրաբերէ՛ր քերա-
- կանութիւն , շարադրութիւնք եւն . թարգմա-
- նութիւն ՚ի Ֆրանսերէնէ Օսմաներէն եւ փո-
- խադարձ :
- 3 | Ֆրանսերէն լեզու . — Շարադրութիւն ,
- մատենագրութիւն եւ թարգմանութիւն :
- 4 | Վաճառականութիւն . — Տոմարակալու-
- թիւն , եւ վաճառականական օրէնք :
- Գծագրութիւն . —

### Գ. ՏԱՐԻ

- 2 | Կրօնագիտութիւն . —
- 3 | Հայ լեզու եւ գրագիտութիւն . — Թարգ-
- մանութիւն փոխադարձ , շարադրութիւնք ,
- շարունակութիւն գրագիտութեան , վերձա-
- նութիւն հին եւ նոր հեղինակաց :
- 2 | Պատմութիւն . — Օսմանցւոց , ծագումն
- եւն . ընդհանուր պատմութիւն նոր աղգաց եւ
- ժամանակակից :
- 3 | Ուսողութիւն . — Ընդհանուր ուսումն հա-
- ւասարութեանց , ածանցեալք եւն . եռանկիւնա-
- չափութիւն մակարդակ , փորձք արտաչափու-
- թեան :

- 2 | Բնական գիտութիւնք . — Բնագիտութիւն ,
- բնալուծութիւն եւ բնական պատմութիւն ,
- բնական գիտութեանց գործածութիւնք ճար-
- տարութեան մէջ :
- 4 | Իրաւագիտութիւն . — Սկզբունք Օսման-
- եան օրէնսդրութեան :
- 3 | Օսմաներէն լեզու . — Արաբերէն եւ
- պարսկերէն քերականութիւն , շարադրութիւն
- եւ թարգմանութիւն :
- 3 | Գաղղիերէն լեզու . — Մատենագրու-
- թիւն , շարադրութիւն , գրագիտութիւն եւ
- թարգմանութիւն :
- Առողջաբանութիւն . — Ընդհանուր ծա-
- նօթութիւնք :

### ԵՐԿՐՈՐԳ ԵՐԶԱՆ

### Գ. ՏԱՐԻ

- 2 | Կրօնագիտութիւն . —
- 2 | Հայ լեզու . — Շարադրութիւն աշխար-
- հարառ եւ դրաբառ , գրագիտութիւն եւ վեր-
- ձանութիւն հին եւ նոր մատենագրաց :
- 4 | Հայ եւ օտար լեզուաց մատենագրական
- պատմութիւն . —
- 2 | Պատմութիւն . — Փիլիսոփայութիւն պատ-
- մութեան , եւ ժամանակակից պատմութիւն
- ընդարձակ :



- 2 Ուսողութիւն . — Վերլուծական երկրա-  
չափութիւն եւ զնդածեւ , եռանկիւնչափութեան ;  
2 Բնական գիտութիւն . — Բնալուծական  
փորձք , բնական պատմութիւն եւ ընդարձակ  
տեսութիւն նախորդ տարւոյ դասուց :  
1 Իմաստասիրութիւն . — Հողեբանութիւն ,  
տրամաբանութիւն եւ բարոյագիտութիւն :  
2 Քաղաքական տնտեսութիւն . — Արտա-  
ղըրութիւն , շրջաբերութիւն , բաշխումն ,  
սպառումն :  
1 Մանկավարժութիւն . — Սկզբունք ման-  
կավարժութեան եւ պատմութիւն :  
2 Օսմաներէն լեզու . — Այլ եւ այլ շարա-  
ղրութիւնք , վերծանութիւն հեղինակաց :  
2 Ֆրանսերէն լեզու . — Գրագիտութիւն ,  
եւ այլ եւ այլ շարաղրութիւնք :  
1 Վարչական իրաւագիտութիւն . — Սկզբ-  
ունք :

**Ե. ՏԱՐԻ**

- 2 Կրօնագիտութիւն . —  
2 Հայ լեզու , — Շարունակութիւն շարա-  
ղըրութեանց եւ գրագիտութեան , վերծա-  
նութիւն եւ քննական ուսում հին եւ նոր  
հեղինակաց : —  
1 Հայ եւ օտար լեզուաց մատենագրական  
պատմութիւն . —  
2 Ուսողութիւն . — Մեքենագիտութիւն ,  
զձագրական երկրաչափութիւն :

- 1 Իմաստասիրութիւն . — Պատմութիւն և  
մաստասիրութեան :  
1 Մանկավարժութիւն . — Գործնական վար-  
ժութիւնք :  
2 Օսմաներէն լեզու . — Շարաղրութիւնք ,  
մատենագրական տեղեկութիւնք :  
2 Ֆրանսերէն . — Շարունակութիւն նա-  
խընթաց տարւոյ :  
2 Ելեւմտական գիտութիւն . — Սկզբունք :





# ՔԱՂՈՒՍԾ

## ՆԵՐՔԻՆ ԿԱՆՈՆԱԳՐՈՒԹԵՆԷ

### ՊՍՅՄԱՆԻ ԵՒ ՀԱՐՅԱՔՆՆՈՒԹԻՒՆԻՔ

#### ԸՆԳՈՒՆԵԼՈՒԹԵԱՆ

Ամէն տարեգլուխ լրագրաց միջոցաւ կը ծանուցուի Վարժարանին բացման եւ դասախօսութեանց թուականն: Աշակերտ մը ընդունուելու համար պարտի Վարժարանին Խնամակալութեան ներկայանալ իւր ծնողաց եւ կամ պաշտպանի մը հետ:

Աշակերտ մը ներկայայաճ ատեն տպադրեալ թուղթ մը կտտանայ, որոյ մէջ նշանակեալ հարցմանց գրաւոր պատասխաններով, եւ զայն իւր բնակատեղւոյն Քաղաքան Խորհրդոյ կողմանէ վաւերացնելով կը յանձնէ Խնամակալութեան:

Այս թուղթը կը պարունակէ,

Աշակերտին ծնողաց բնակութեան թաղը.

Մնողաց անուանքն եւ զբաղմունք.

Աշակերտին անունն եւ ծննդեան թուականը.

Աշակերտին ո՞ր վարժարանի մէջ ուսուժ առած լինելը.

Աշակերտին առողջական վիճակը.

Մնողաց կամ պաշտպանին ստորագրութիւնը, որով կը յայտնեն հպատակիլ վարժարանին կանոնաց:

Խնամակալութիւնն այս գրութիւնը պահելով, աշակերտին ձեռքը թուագրեալ տոմս մը կուտայ, որով որոշեալ ժամանակ կը ներկայանայ քննութիւն անցունելու:

Աշակերտ մը ընդունուելու համար կը հարցաքննուի Խնամակալութեան կողմանէ կարգեալ եւ մի քանի ուսուցիչներէ կազմեալ մասնախմբի մը ձեռքը հետեւեալ ուսմանց վրայ.

Կրօնք. — Ուսումն Գրիստոնէակոնի եւ Սրբազան պատմութեան:

Հայ լեզու. — Քերականութիւն, գրաբան է աշխարհաբան թարգմանութիւն, ուղղագրութիւն եւ աշխարհաբան շարագրութիւն:

Պատմութիւն. — Ազգային եւ ծանօթութիւն ՚ի վերայ հին ազգաց պատմութեան:

Աշխարհագրութիւն. — Բնական եւ քսղաքական հինգ մասանց վրայ ծանօթութիւն:

Ուսողութիւն. — Թուարանութիւն ամբողջ, սկզբունք երկրաչափութեան (չրճանակ):

Օսմաներէն լեզու. — Կարդալ, գրել, ուղղագրութիւն:

Ֆրանսերէն լեզու. — Քերականութիւն, թարգմանութիւն Ֆրանսերէնէ ՚ի Հայ եւ փոխադարձ, ուղղագրութիւն:

Գեղագրութիւն. — Ըստ բաւականի:

Գծագրութիւն. — Սկզբունք:

Եթէ ստացած թիւերուն գումարն հասնի միջին ուրոշ թուոյ մը, զոր Խնամակալութիւնը կը սահմանէ, եւ որ ամէն տարի փոփոխելի է, աշակերտը կ'ստանայ մրտից ամսը, զոր պարտի ներկայացնել առաւօտները վարժարան մտած ժամանակ:



Աշակերտք երեք կարգի կը բաժանին ,

Ա. Լիաթոշակք , ուր կը վճարեն 12 ոսկի տարին ,

Բ. Կիսաթոշակք , » » » 6 » »

Վճարմունք վեցամսեայ են եւ կանխիկ ,

Գ. Ձրի կ'ընդունուին այն աշակերտք , որոց դրամական անկարողութիւնը վկայեալ է , եւ որք՝ ըստ կանոնագրոյ՝ պաշտօնագիր ունին 'ի ձեռին' Աղբայրն Պատրիարքարանէ :

Ամէն վեց ամիս աշակերտք կը ներկայանան Խնամակալութեան կողմանէ կարգեալ պաշտօնի մը , իրենց վճարումը կատարելու եւ նոր մտից տուս ստանալու :

ՊԱՍԿՆԱԿԱՅՈՅՅ

Ե Ի

ԴՍՍԱԽՍՍՈՒԹԻՒՆՔ

Դասախօսութիւնք թուով չորս են մէկ աւուր մէջ , երկու դաս կէս օրէն առաջ , նրկու դաս կէս օրէն վերջ : Դասախօսութեանց տեւողութիւնը մէկ ժամէն պակաս չէ , եւ ոչ մէկուկէս ժամէն աւելի . այս սահմաններու մէջ Խնամակալութիւնը ժամանակացոյցով կ'որոշէ զանազան դասախօսութեանց տեւողութիւնն :

Առաւօտեան ժամ 9 ին կ'սկսին դասախօսութիւնք : եւ կ'աւարտին երեկոյեան ժամ 3 ին ըստ Եւրոպացոց , Որոշեալ ժամէն վերջ ներկայացող աշակերտաց ան-

ուանք կը նշանակուին օրագրութեան մէջ : Նմանապէս , եթէ աշակերտ մը օր մը բացակայ լինի , նախապէս ծանուցած պէտք է ըլլայ եւ կամ՝ յաջորդ օրը պարտի իւր ընտանեացը կողմանէ գիր բերել առ Խնամակալութիւնն՝ իւր բացակայութեան պատճառը բացատրող , ապա թէ ոչ՝ Խնամակալութիւնը դրաւոր հարցում կուզի աշակերտին ծնողաց :

Երեկոյեան որոշեալ ժամէն առաջ մեկնիլ արգիլեալ է բացարձակապէս :

Միջօրէին մէկ ժամադատ են աշակերտք ճաշելու համար Դասախօսութիւնք տեղի կունենան ամէն կարգի յատկացեալ դասարանաց մէջ , ուր դասատուն կը ներկայանայ որոշեալ ժամուն : Միայն բնագիտական եւ տարրագիտական՝ այսինքն՝ փորձերով արուեստիք դասերու համար աշակերտք ամիլիթատոն կերթան :

Դասախօսութիւնք ըստ նիւթին , դասատուաց կողմանէ պատրաստեալ են , եւ օրագրութեանց մէջ ամէն դասի նիւթը կը նշանակուի դասատուին կողմանէ՝ հանդերձ ստորագրութեամբ : Դասատուն կը հարցաքննէ՝ զաշակերտն երբ որ յարմար դատէ , եւ թիւ կուտայ օրագրութեան տետրին մէջ :

ՊԱՍԿԳԻՔ

Ե Ի


ԴՊՐՈՅԱԿԱՆ ՊԻՏՈՅՔ

Առ հասարակ ամէն կարգի աշակերտք , լիաթոշակք , կիսաթոշակք եւ ձրիք , պարտին իրենց ծախիւք հողալ դասադիրք եւ դպրոցական այլ եւ այլ պիտոյք :



Դատադիրք Վարժարանին կողմանէ սահմանեալ են , եւ կը վաճառուին Վարժարանին գրատան մէջ , սակայն աշակերտն ազատ է նոյն դատադիրքը դուրսէն դնելու : Դպրոցական պիտոյք , այսինքն թուղթ , գրիչ , տետրակ եւս Վարժարանին մէջ կը ծախուին միօրինակութեան համար :

Դասատուներն երբոր կարեւոր ուսմանց համար չի գտնեն յարմար դասագիրք , իրենք կը շարագրեն դասալուսութիւններն , եւ խնամակալութիւնն ըստ պատշաճի վիճադրել կուտայ զանոնք ի պէտս աշակերտաց :



### ՅԱՐՍԲԵՐՈՒԹԻՒՆՔ

Աշակերտք եթէ որ եւ իցէ գանգատ մը կամ դիտողութիւն մ'ունենան , գրով կը ներկայացնեն խնամակալութեան , որ յետ տեղեկանալոյ կը անօրինէ պարտ ու պատշաճը : Խնամակալութեան կողմանէ աշակերտաց եւ պաշտօնէից վերաբերեալ անօրէնութիւնք գրաւոր շրջաբերականաւ կը ծանուցուին , որոց մի օրինակը կը կախուի Վարժարանին մէջ :



### ՆԵՐՔԻՆ ԲԱՐԵԿԱՐԳՈՒԹԻՒՆ

Աշակերտք պարտին կատարեալ ճշգրտութեամբ հպատակիլ Վարժարանին ամէն օրինաց : Այն աշակերտ ,

որ մի քննի անգամ անլայել կամ անկարգ ընթացքի մէջ գտնուի , կ'արտաքսի Վարժարանէն : Աշակերտք պարտին կատարել դասատուին տուած հրահանգները , միշտ յարգանք եւ ակնածութեամբ վարուիլ նոցա հետ , մաքուր եւ պատրաստ ունենալ իրենց դասատեարերն , եւ խնամ տանիլ մարմնոյ եւ զգեստուց մաքրութեան :

Ինչպէս Վարժարանին մէջ , նոյնպէս ՚ի վիտղոցի եւ ամենուրեք աշակերտք պարտին Վարժարանին պատուաբեր ընթացք ունենալ :

Աշակերտաց ծնողք կամ դասատուաց բարեկամք չեն կրնար Վարժարան մտնել թէ՛ դասալուսութեանց եւ թէ՛ դադարի պահուն , առանց մասնաւոր արտօնութեան :

Բացառաբար Կրօնագիտութեան դասերուն կրնան ներկայ գտնուիլ իբրեւ ունկնդիր՝ այն անձինք , որք պաշտօնական արտօնագիր ունին ՚ի ձեռին Ազգ. Վարչութեան :

Այս վերջինք պարտին կատարելապէս համաձայնիլ կանոնաց Վարժարանին :

Օրագրութեան տետրերու շարաթիական ամփոփումը խնամակալութեան նխատերուն կը ներկայացուի կարդապահին խնամօք , եւ անդ կը անօրինուի պարտ ու պատշաճը :



### ՀԱՐՅԱՔՆՆՈՒԹԻՒՆՔ

Հարցաքննութիւնք երկու տեսակ են , տարեկան եւ վեցամսեայ , եւ կը կատարուին գրաւոր եւ բերանացի :

Վեցամսեայ հարցաքննութիւնք գրաւոր կը կատարուին որոշեալ թուականներով , որոշեալ ուսմանց վրայ



այնպէս բաժնուած , որ աշակերտք մէկ հարցաքննութեանէ մինչեւ միւսը ժամանակ ունենան նորէն պատրաստուելու :

Տարեկան հարցաքննութիւնք թէ՛ դրաւոր եւ թէ՛ բերանացի կը կատարուին : Հարցաքննութեան նիւթը Խընամակալութիւնը կորոչէ դասատուաց ներկայացուցած ցանկերու վրայէ . իսկ սրբագրութիւնք եւ դասակարգութիւնք դասատուաց կը պատկանին :

Վեցամսեայ եւ տարեկան հարցաքննութեանց արդիւնքը միացնելով , վերջնական ցանկեր կը պատրաստուին , որք տարեկան մրցանակաբաշխութեան կը ծառայեն :

Այլ եւ այլ կարգաց բերանացի հարցաքննութիւնք կը կատարուին 'ի ներկայութեան Խնամակալութեան եւ Վարժարանի ուսուցչական մարմնոյն : Իսկ չըջանաւարտ աշակերտաց հարցաքննութիւնք տեղի կունենան 'ի ներկայութեան Աղգային Պետումնական Խորհրդոյ , Մէարիֆի պաշտօնէից եւ այլ նշանաւոր անձանց՝ հրաւիրանօք Խընամակալութեան :

Աշակերտաց ծնողք , ըստ կանխու խնդրանաց , կըրնան իրենք եւ հրաւիրուիլ այս ինչ կամ այն ինչ քննութեան , եթէ Խնամակալութիւնը պատշաճ դատէ :

ԴՍԴՍԲԲ

Վարժարանին ուսումնական շրջանը կսկսի ամէն տարւոյ Սեպտ. 1 ին եւ կաւարտի Մայիս 31 ին : Յունիս 1 էն մինչեւ Յունիս 15՝ դրաւոր , եւ մինչեւ Յունիս 30 բերանացի հարցաքննութիւնք կը կատարուին . Յունիս 1 էն

մինչեւ ցվերջ Օգոստոսի դադար է , եւ նոյն միջոցին կը կատարուի մրցանակաբաշխութեան հանդէսն :

Տարւոյ միջոցին եւս դադարք կը տրուին . կրօնական եւ Աղգային տօնից օրեր , ինչպէս նաեւ քաղաքական տօնից , զոր օրինակ Օգոստափառ Սուլթանին ծննդեան եւ դահակալութեան տարեդարձի օրերն , ելն .

ԲԱՆԱԽՕՍՈՒԹԻՒՆԲ

Խնամակալութիւնն , եթէ պատշաճ դատի , բանախօսութիւններ կը սահմանէ ուսմանց դանադան ճիւղերու վրայ , եւ այս բանախօսութիւնք դասատուաց կողմանէ տեղի կունենան Վարժարանին ամիիթատրոնին մէջ , այնպիսի ժամանակներ , յորում դասախօսութիւնք ոչ վընասուին եւ ոչ խանդարին :


Այս բանախօսութեանց կրնան ներկայ դառնուիլ նաև երկու սեռէ ունինդիրք , հրաւիրանօք Խնամակալութեան եւ մասնաւոր սոմսերով :



# ԲԱԺԱՆՈՒՄՆ ԴԱՍՈՒՑ

## ԿՐՕՆԻ ՈՒՍՄԱՆ

ԸՍՏ ՈՐՈՇՄԱՆ ԱԶԳ. ԿԵԴԻ. ՎԱՐԶ. ԿՐՕՆԱԿԱՆ ԺՈՂՈՎՈՑ



## ԱՌԱՋԻՆ ՇՐՋԱՆ

### Ա. ՏԱՐԻ

Նախնական քրիստոնէական վարդապետութիւն , եւ պատմութիւն Հին Կտակարանի . —

### Բ. ՏԱՐԻ

Կրթական քրիստոնէական վարդապետութիւն , եւ պատմութիւն Նոր Կտակարանի . —

### Գ. ՏԱՐԻ

Դասական կրօնագիտութիւն եւ քրիստոնէական բարոյադիտութիւն . —




## ՇՐԿՐՈՐԴ ՇՐՋԱՆ

### Դ. ՏԱՐԻ

Պատմութիւն Հայաստանեայց Եկեղեցւոյ . Հայաստանեայց Եկեղեցի , դաւանութիւն , կազմակերպութիւն եւ ծէսք . ուսումն դաւանութեան քրիստոնէական Եկեղեցեաց ըստ Քննական կրօնագիտութեան . —

### Ե. ՏԱՐԻ

Փիլիսոփայութիւն կրօնից . ուսումն , մեկնաբանութիւն եւ Աստուածաբանութիւն Աստուածաշունչ Գրոց . —





# ՈՒՍՈՒՑՁԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ

## ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐԺԱՐԱՆԻ

Արժ.	Այլազեան	Տէր Յովսէփ Ծ. Վարդապետ
Մեծ.	Արիկեան	Մինրան էֆ.
»	Անդրէասեան	Նշան »
»	Ասղանազեան	Մինրան »
Մօսիէօ	Բէրար	» (Ուսանողի ընթացիկութեան դասուց կայս. լինելի)
Մեծ.	Գարագաշեան	Մատաթիա »
Վսեմ.	Եսուսֆեան	Տիգրան » (Անդամ վերաբնակ արեւելի)
Մեծ.	Զազարեան	Գրիգոր »
»	Թէրզեան	Թովմաս »
»	Հէթիմեան	Սրապիոն »
»	Մարգարեան	Գրիգոր »
»	Յակոբեան	Ս. Տօթթիլօն »
»	Նշանեան	Կարապետ »
Վսեմ.	Նորատունկեան	Գարրիէլ » (Իրասանից խորհրդ. դասիան արդ. քննութեան պաշտօնատան)
»	Շահպազ	Կարապետ » (Անդամ վերաբնակ արեւելի)
Մեծ.	Շահնազար	Յովհաննէս »
»	Շիշմանեան	Յովսէփ » (Տօթթիլօն)
»	Մինաս	Զերազ »
»	Պէրպէրեան	Ռէթիլօն »
»	Պոյաճեան	Յակոբ »
Վսեմ.	Սաղըղլեան	Յովհաննէս » (Բնորդ. դասարանի հասցեալները արեւելի)
Մօսիէօ	Սարէ	» (Ուսանողի ընթացիկութեան դասուց կայս. լինելի)

# ԴԻԻԱՆ

## ՔՆԱՄԱԿԱԼՈՒԹԵԱՆ

Տեաքք	ՄԿՐՏԻԶ	ԷՍԱԵԱՆ	Արեւապետ
	ՅԱՐՈՒԹԻԻՆ	ՆՈՐԱՏՈՒՆԿԵԱՆ	Դէր »
	ՅՈՎՀԱՆՆԵՒՄ	ԹՈՐՈՍԵԱՆ	Արեւադպիր
	ՅՈՎՍԷՓ	ԵՈՒՍՈՒՑԵԱՆ	Դէր »
	ՏԻԳՐԱՆ	ԲԱՐԱՂԱՄԵԱՆ	Գանձապահ



№ 7168





Р. У.

№ 7168